# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՈՂՋԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ
համայնք, 5-փ 7, Հեռ. 2-42-26 , norik.melkonyan@mail.ru

N 51
*28 փետրվար 2020թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարին կայացրած թիվ 06-Ա- 09-Ա որոշումները:

Առդիր՝ 4 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

*Կատ. Քարտուղար՝ Մ. Կարապետյան*
*Հեռ.՝ 098-29-30-10*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 փետրվարի 2020 թվականի N 06-Ա

## ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի,84-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 14-ի N 17-Ն որոշումը,

*որոշում եմ*

1. Ողջաբերդ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության և համայնքի ղեկավարի հաշվետվությունը հնգամյա զարգացման ծրագրի 2019 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:
2. Հաստատել Ողջաբերդ համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության և համայնքի ղեկավարի հաշվետվությունը հնգամյա զարգացման ծրագրի 2019 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ *համաձայն հավելվածի*.
3.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Հայկանուշ Բաբայանին՝համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում տեղադրել կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը,ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղերում և այն վայրերում,որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:
4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Հայկանուշ Բաբայանի վրա:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Մարիամ Կարապետյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

2020թ. փետրվարի 17

գ.Ողջաբերդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 փետրվարի 2020 թվականի N 07-Ա

### ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով՝

*որոշում եմ՝*

1. Թույլատրել Արմեն Դավթյանին Ողջաբերդ համայնքի 1-ին փողոցում գտնվող թիվ 4 հիմնական շինության ներսում 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով:
2.Թույլատրել Արտակ Սարգսյանին Ողջաբերդ համայնքի 1-ին փողոցում գտնվող թիվ 3 հիմնական շինության ներսում 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով:
2. Պարտավորեցնել Արմեն Դավթյանին և Արտակ Սարգսյանին մուծելու սահմանված տեղական տուրքը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

2020թ. փետրվարի 24

գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

26 փետրվարի 2020 թվականի N 08-Ա

## ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 39-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2020 թվականի փետրվարի 20-ի N 57-Ա որոշումը՝

*որոշում եմ*

1. Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 23-ի <<Համայնքային ծառայության և ատեստավորման հանձնաժողով կազմավորելու և հմայնքի ղեկավարի 2016 թվականի նոյեմբերի 21-ի N 38-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 39-Ա որոշումը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝
Հանձնաժողովի նախագահ՝Նորայր Մելքոնյան-համայնքի ղեկավար
Հանձնաժողովի անդամներ՝Արևշատ Առաքելյան-մարզպետարանի ներկայացուցիչ
Տիգրան Գեղամյան-մարզպետարանի ներկայացուցիչ
Արմեն Վարդանյան-մարզպետարանի ներկայացուցիչ
Արիջան Շահբազյան-ավագանու անդամ
Եղիշե Մելքոնյան-ավագանու անդամ
Կարեն Գևորգյան-ավագանու անդամ
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

20<u>20</u>թ. <u>փետրվարի</u> <u>26</u>

գ.Ողջաբերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2020 թվականի N 09-Ա

## ՈՂՋԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի <<Համայնքային ծառայողի ատեստավորման կարգը հաստատելու մասին>> թիվ 15-Ն հրամանը՝

*որոշում եմ՝*

1.2020 թվականի մարտի 30-ին ժամը 11:00-ին նշանակել ատեստավորում Ողջաբերդի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողի՝
Մարիամ Գարեգինի Կարապետյան- աշխատակազմի քարտուղար /ծածկագիր 1.2-1/
2.Ատեստավորման նախապատրաստական և տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման լիազորությունները դնել առաջատար մասնագետ Հ. Բաբայանի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

2020 թ. փետրվարի 28

գ.Ողջաբերդ